ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 28 >> սեպտեմբերի 2018թ. N 479-Լ.

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժնի կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա.ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«28» սեպտեմբերի 2018թ.
N 479-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժինը (այսուհետ՝ Բաժին) Նախարարության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման համաձայն:

2"Բաժինն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ Նախարար) հաստատում է Բաժնի կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը և կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ:

II. ԲԱԺՆԻ ՀԻՄԱՆԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Բաժնի հիմնական խնդիրներն են՝

1) Նախարարության զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում համապատասխան պետական քաղաքականության իրականացումը.

2) Բաժնի իրավասությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ նպատակներ և խնդիրներ:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի գործառույթներն են՝

1) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ, Նախարարության աշխատողների պաշտպանությունը և Նախարարության համակարգի կայուն գործունեությունը ապահովելու նպատակով կազմակերպչական համալիր միջոցառումների իրականացումը.

2) Նախարարության քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, կազմավորումների ստեղծումը, Նախարարության զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորումը, նախապատրաստումը, մշակումը և անհրաժեշտության դեպքում՝ դրանց իրականացումը.

3) Նախարարության քաղաքացիական պաշտպանության շտաբի, զորահավաքային մարմնի, արտակարգ իրավիճակների և տարահանման հանձնաժողովների աշխատանքների խաղաղ և ռազմական դրության ժամանակ համապատասխան իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան համակարգումը.

4) Նախարարության զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության ծրագրերի և պլանների մշակումը, աշխատանքների տեղեկատվական, մեթոդական և կազմակերպչական ապահովումը.

5) Նախարարության զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության պլանների կատարումը, ուսումնական վարժանքների անցկացումը, ուսումնավարժական հավաքների և պարապմունքների կազմակերպումն ու իրականացումը.

6) միջոցառումների կատարման վերաբերյալ և օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան հաշվետվությունների կազմումը և ներկայացումը բնագավառի պետական լիազոր մարմիններ.

7) Նախարարության պաշտոնատար անձանց և Նախարարության զորահավաքային տարիքի աշխատակիցների զինվորական հաշվառումը և ամրագրումը.

8) Հայաստանի Հանրապետության պաշտպանության և արտակարգ իրավիճակների նախարարությունների կողմից կազմակերպված միջոցառումներին՝ հրամանատարաշտաբային ուսումնավարժություններին, շտաբային վարժանքներին, խորհրդակցություններին և սեմինարներին Նախարարության մասնակցության ապահովումը.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով զորահավաք հայտարարվելու դեպքում, Նախարարության ղեկավար կազմի և աշխատողների համապատասխան աշխատանքային ռեժիմի փոխադրելու միջոցառումների իրականացման ապահովումը.

10) իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության, այլ նախարարությունների և մարմինների կողմից ներկայացված օրենքների, որոշումների և այլ իրավական ակտերի ուսումնասիրությունը, քննարկումը և համապատասխան եզրակացությունների ներկայացումը.

11) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության, զորահավաքային նախապատրաստության միջոցառումներով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսական համակարգի մարմիններին վերապահված գործառույթների շրջանակներում Բաժնի աշխատակիցների միջգերատեսչական և աշխատանքային այլ խմբերում ու հանձնաժողովներում ընգրկումը.

12) մասնագիտական գիտելիքները, աշխատանքային կարողությունները և ունակությունները կատարելագործելու նպատակով բաժնին վերապահված լիազորությունների շրջանակներում միջազգային կազմակերպությունների ծրագրերով նախատեսված և կազմակերպված միջոցառումներին Բաժնի աշխատակիցների մասնակցությունը.

13) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով զորահավաք հայտարարելու դեպքում՝ ռազմական դրության բնագավառի իրավական ակտերով նախատեսված պահանջներին համապատասխան,

Նախարարության աշխատանքների անընդհատ կազմակերպման և շարունակական գործունեության իրականացման աշխատանքների կազմակերպումը և համակարգումը.

14) քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի քաղաքացիական պաշտպանության գծով պատրաստման աշխատանքների կազմակերպումը.

15) քաղաքացիական պաշտպանության հարցերով անձնակազմի նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակման և դրանց ներկայացման ապահովումը.

16) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Բաժնի գաղտնի գործավարության իրականացումը.

17) Նախարարության կանոնադրությամբ Բաժնին վերապահված այլ գործառույթների իրականացումը.

18) Նախարարի և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) այլ հանձնարարականների կատարումը:

IV. ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Բաժինը ղեկավարում է բաժնի պետը, նրա բացակայության դեպքում՝ բաժնի գլխավոր մասնագետը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ բաժնի առաջատար մասնագետը:

7.Բաժնի պետը հաշվետու է Նախարարին:

8.Բաժնի պետը անմիջական հաշվետու է Գլխավոր քարտուղարին:

9. Բաժնի գործունեության համակարգումը Նախարարի հրամանով իրականացնում է Գլխավոր քարտուղարը:

10. Բաժնի պետին հանձնարարականներ և ցուցումներ տալիս է Նախարարը: Նախարարի հանձնարարությամբ հանձնարարականները կարող է փոխանցել, իր համակարգման լիազորությունների շրջանակներում, Գլխավոր քարտուղարը:

11. Գլխավոր քարտուղարը Բաժնի պետին տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Նախարարին:

12.Բաժնի գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է Բաժնի պետը:

13. Բաժնի յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները և կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով):